AURORA
HUMANITARIAN INITIATIVE

Ապրիլի 13, 2026 թ.

Մեր ամենամսյա նախորդ տեղեկագրից հետո Մերձավոր Արեւելքում պատերազմ բռնկվեց՝ հանգեցնելով անկարգությունների եւ ավերածությունների: Օդային հարվածների հետեւանքով 3 միլիոն իրանցիներ ստիպված եղան լքել իրենց տները: Տասնամյակներ տեւած ցնցումներից հետո Լիբանանի բնակչության մոտ 20 տոկոսը ենթարկվել է ներքին տեղահանության: Ամբողջ տարածաշրջանում մի սերունդ է մեծանում, որի համար սա դարձել է բնականոն ընթացք:

Օմանում հաստատված իրավապաշտպան, հետազոտող եւ «Ավրորայի» մերօրյա հերոս Հուդա ալ-Սարարին այսպես է բնորոշում իրադրությունը.

«Ռազմական էսկալացիան Մերձավոր Արեւելքը... վերածել է ծայրաստիճան վտանգավոր միջավայրի, որտեղ քաղաքացիական բնակչության համար ապրելու տարածքները շատ արագ վերանում են: Այս աշխատանքը շարունակելն այլեւս ընտրության հարց չէ, այլ բարոյական դիրքորոշում, որը պահանջում է ամենօրյա խիզախություն»:

Հուդա ալ-Սարարի

Եվ այս պայմաններում մարդասիրության ոլորտի ֆինանսավորումը շարունակվում է կրճատվել (տես՝ Միացյալ Թագավորություն), ինչի հետեւանքով ավելի մեծ բեռ է ընկնում տեղական համայնքների ուսերին: Բազմաթիվ ուսուցիչներ, բժիշկներ, իրավաբաններ իրենց կյանքը նվիրում են հարեւաններին, իրենց համայնքներն ու հանրությանը պաշտպանելու գործին: Հենց նրանց ջանքերի շնորհիվ են մարդիկ հաղթահարում բազմաթիվ մարտահրավերներ ու շարունակում գոյատեւել:

Մենք նրանց անվանում ենք տեղում աշխատող մարդասերներ կամ մերօրյա հերոսներ: Ներկայացնելով լավագույնը մարդկության մեջ՝ նրանք մեր ամենաարժեքավոր ռեսուրսն են: Եվ եթե վերջին իրադարձություններն ընդունենք որպես նոր իրականության ցուցիչ, առաջիկա տարիներին մենք ավելի ու ավելի շատ հերոսների կարիք ենք ունենալու:

Ու հիմա մեր «Ավրորա 2.0» նոր ռազմավարությունը գործարկելու ճիշտ պահն է, որը հանրայնացնում ենք այսօր՝ այստեղ եւ մեր կայքում:

ԱՎՐՈՐԱ 2.0

Անցած տարվա ընթացքում մենք համագործակցել ենք մեր Տնօրենների խորհրդի, Ընտրող հանձնաժողովի, մարդասիրական գործիչների, բազմաթիվ գործընկերների եւ աջակիցների հետ՝ մեր գործունեության հաջորդ շրջանի ռազմավարությունը մշակելու համար: Նրանց հայտնում ենք մեր խորին երախտագիտությունը:

«Ավրորա 2.0» ռազմավարությամբ մենք մարդուն դիտարկում ենք մարդասիրության առանցքում եւ արթնացնում մեզնից յուրաքանչյուրի մեջ եղած մարդասիրությունը: Մենք շարունակում ենք «Ավրորա» մրցանակի միջոցով ճանաչման արժանացնել բացառիկ մարդասերների՝ դրան ավելացնելով գործընկերային երկարաժամկետ ծրագրեր:

ՏԵՍԼԱԿԱՆ

Աշխարհ, որը զորացնում է անհատ-մարդասերներին՝ արթնացնելով մեր համընդհանուր մարդկայնությունը:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Սատարել անհատ-մարդասերներին՝ ճանաչման արժանացնելու, համագործակցության եւ հասարակական ընկալումների փոփոխության միջոցով:

Հավակնոտ ձգտումներ են: Ինչպե՞ս ենք հասնելու դրանց: Նախ՝ **ճկուն ֆինանսավորմամբ**, որը տրվում է անմիջապես մարդասիրական գործիչներին, երբ նրանք ունեն դրա կարիքը: Բացի այդ, դա անելու ենք այն **կարողությունների զարգացմամբ**, ինչի կարիքը մեր համայնքն իսկապես ունի. այս պահին մենք ակտիվորեն ուսումնասիրում ենք: Ի վերջո, սա նշանակում է նաեւ օգտագործել մեր **համախմբող ուժը** եւ միավորել առաջնագծում գործունեություն ծավալող մարդասեր-առաջնորդներին դոնորների, գործընկերների եւ միմյանց հետ:

«Ավրորա» մրցանակի գոյության անցած տասը տարիների ընթացքում ձեւավորվել է 73 երկրների եւ տարածքների 100-ից ավելի մարդասեր-առաջնորդների համաշխարհային ցանց՝ «Ավրորա» մարդասիրական համայնք: Իրենց գործունեությամբ նրանք ազդեցություն են ունեցել տասնյակ միլիոնավոր մարդկանց կյանքի վրա, եւ այս թիվն ամեն օր աճում է: «Ավրորա 2.0»-ի շնորհիվ ձեւավորվող այս համայնքը դառնում է ավելի ուժեղ, ավելի կապակցված եւ ռեսուրսներով հագեցած, եւ այս ամենը՝ «Ավրորայի» հերոսների հետ համագործակցությամբ:

Այսպիսի ժամանակներում աղոթքներն ու մտքերն ամենուր են: Երբ պատրաստ լինեք ավելի հեռուն գնալ եւ աջակցել Հուդայի նման մարդասիրական գործիչներին, ահա դա անելու չորս տարբերակ՝ հենց հիմա եւ աշխարհի ցանկացած կետից.

1. Միացեք մեզ «Սքոլ» համաշխարհային ֆորումին

Ապրիլի 22

Բացման արարողությանը **երգիծաբան եւ գրող Թրեւոր Նոան կզրուցի «Ավրորայի» համահիմնադիր եւ Տնօրենների խորհրդի նախագահ Նուբար Աֆեյանի հետ** այն մասին, թե ինչպես կարող է մեր աշխարհընկալումը նպաստել սոցիալական ձեռներեցությանը համաշխարհային ցնցումների ժամանակաշրջանում:

Ֆորումին կմասնակցեն նաեւ «Ավրորայի» դափնեկիր Իլվադ Էլմանը եւ «Ավրորայի» Ընտրող հանձնաժողովի անդամ Դեյլե Օլոջեդեն:

Ապրիլի 23

«Ավրորան» կանցկացնի **«Մարդասիրության նոր մոդելի ֆինանսավորում. տեղում մարդասիրական արձագանքին ուղղվող գլոբալ աջակցության ընդլայնում»** թեմայով քննարկում:

ԳՐԱՆՑՎԵԼ

10:30 – 11:30 (Լոնդոնի ժամանակով) | Օքսֆորդի քաղաքապետարան | Սենթ Ալդեյթս, Օքսֆորդ, OX1 1BX

2. Առաջադրեք մարդասերների «Ավրորա» մրցանակին

«Ավրորա» մրցանակն աջակցում է առաջնագծում մարդասիրական գործունեություն ծավալող առաջնորդներին եւ օգնում նրանց շարունակել ու ընդլայնել իրենց աշխատանքը: Ձեր առաջադրումը կարող է դառնալ այն կարեւոր քայլը, որը մարդասիրական գործչին կբերի ճանաչելիություն եւ անհրաժեշտ ռեսուրսներ՝ ավելի շատ մարդկանց երկարաժամկետ աջակցելու համար:

ԱՌԱՋԱԴՐԵՔ ՀԻՄԱ

3. Աջակցեք մերօրյա հերոսներին

Աջակցեք «Ավրորա 2.0»-ին եւ օգնեք լինել նրանց կողքին, ովքեր դժվարին պահին անձնվիրաբար կանգնում են ուրիշների կողքին: Յուրաքանչյուր նվիրատվություն օգնում է ամրապնդել նրանց զորացնող համայնքը:

ՆՎԻՐԱԲԵՐԵԼ

4. Ձեր կարծիքը կարեւոր է

Մասնակցեք քննարկումների սոցիալական ցանցերում կամ գրեք info@AuroraHumanitarian.org էլ. փոստին՝ ներկայացնելով ձեր կարծիքը, գաղափարներն ու հարցերը: Այս «նոր իրականությունում» մարդկայնությունը պահելու եւ ամրապնդելու համար անհրաժեշտ է մեզնից յուրաքանչյուրի ներդրումը:

Երախտագիտությամբ՝

Արմինե Աֆեյան
«Ավրորա» մարդասիրական նախաձեռնության ղեկավար

«Ավրորա» գրքի ակումբ

Մեր ընթերցանության անկյունում այն հեղինակներն են, որոնք օգնում են ավելի լավ հասկանալ՝ ինչ է նշանակում լինել մարդ եւ մարդասեր:



Այս ամիս ձեզ ենք ներկայացնում Նասրին Սոթուդեի «Կանայք, կյանք, ազատություն. մեր պայքարն Իրանում մարդու իրավունքների եւ հավասարության համար» գիրքը: Հիմա, երբ Իրանի ապագան թվում է անորոշ, Նասրինի պատմությունը մեզ ցույց է տալիս մարդկային անչափելի խիզախությունը, որը հաճախ դրսեւորվում է լուռ, համառ եւ անձնական զոհողությունների գնով: Սա գրելիս մենք իմացանք, որ Իրանի իշխանությունները կրկին ձերբակալել են նրան: «Ավրորան» իր աջակցությունն է հայտնում Նասրին Սոթուդեին եւ կոչ անում անհապաղ ազատ արձակել նրան:

Եվ եթե այս ամիս ընթերցեք թեկուզ մեկ հոդված առաջնագծում անձնվիրաբար գործող մարդասերների մասին, թող դա լինի «Ավրորա» մրցանակի դափնեկիր, բժիշկ Թոմ Քաթինայի պատմությունը, որը եզակի վիրաբույժ է պատերազմից տուժած Սուդանում:

Երբ բազմաթիվ ճգնաժամեր պահանջում են ուշադրություն, այս նյութը պատմում է այն մասին, թե ինչպիսին է լինում երբեք չդադարող հոգածությունն այնտեղ, որտեղ կա միայն կարիք, եւ չկա աշխարհի ուշադրությունը:

Եթե որեւէ միտք կամ մեջբերում տպավորել է ձեզ, պատմեք մեզ դրա մասին:

info@aurorahumanitarian.org

ԱՋԱԿՑԵՔ

Դեռ չե՞ք բաժանորդագրվել: Հիմա ճիշտ պահն է:

AuroraHumanitarian.org

AuroraLuminaries.com